

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԵ ԿԱՅԾԵՐԻ ՀԱԿՈՒՅԱՆ

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԽՈՍՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՔԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ
ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ**

Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., պրոֆեսոր Չուբարյան Աստղիկ Էդվարդի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Գասպարյան Գայանե Ռաֆֆիի
Բ.Գ.Թ., դոցենտ Վելյան Կարեն Արմիկի

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի հունիսի 29-ին՝ ժամը 11-ին ՀՀ ԲՈՎ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի մայիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Բ.Գ.Պ., պրոֆեսոր՝



Գայանե Մուբարյան

Դիսկուրսն, ընդհանրապես, և գիտական դիսկուրսը, մասնավորապես, առկա հաղորդակցական պահանջներից բխող մտքերի փոխանակման գործընթաց է և բնականոն զարգացման միտումներ ունեցող օրինաչափ երևույթ: Այն կազմված է յուրահատուկ դիսկուրսիվ կառույցներից և կարգավորվում է լեզվակիրների կողմից՝ որոշակի հաղորդակցական սկզբունքների և կարգախտանքի իմացության շնորհիվ: Վերջին տասնամյակներում գիտական դիսկուրսը ու դրա անգլալեզու մատուցումը թե՛ գրավոր, թե՛ բանավոր ժանրերով եղել են բազմաթիվ հետազոտությունների ուսումնասիրության առարկա: Նման հետազոտությունների անհրաժեշտությունը պայմանավորված է անգլալեզու միջազգային կրթություն ստացողների օրեցօր աճող թվաքանակով, ինչի արդյունքում կարիք է առաջանում ուսումնասիրել և գտնել գիտական դիսկուրսի մատուցումը հեշտացնող և խթանող նորանոր միջոցներ: Սույն ատենախոսությունն **արդիական** է այն իմաստով, որ փորձ է արվում ուսումնասիրել և վերադիտարկել խոսքաստեղծման և խոսքըմբռնման գործընթացը գիտական դիսկուրսում: Անհերքելիորեն, խոսքաստեղծման ու խոսքըմբռնման ուսումնասիրությունը գիտական դիսկուրսում հնարավորություն է ընձեռում վերաիմաստավորել տվյալ գործառույթի մեխանիզմների կիրառելիությունը՝ հաղորդակցությունը խթանելու ու ավելի արդյունավետ դարձնելու տեսանկյունից՝ հաշվի առնելով գիտական դիսկուրսին բնորոշ բովանդակային բարդությունը:

Ատենախոսության **նպատակն** է ուսումնասիրել՝ արդյոք խոսքարկման և տեղեկատվական գործառույթները հարաբերակցվում են, և եթե այո, ապա ինչպիսին է այդ հարաբերակցությունը, ինչպես նաև վեր հանել այդ փոխհարաբերակցության արդյունքում ձևավորված ժանրաստեղծ հատկանիշները, և գնահատել դրանց նշանակությունը անգլալեզու գիտական տեքստերի ստեղծման և ընկալման հարցում:

Սույն նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **հիմնախնդիրները**.

- պարզել, թե ինչպիսի դրսևորում ունի խոսքարկման գործառույթը գիտական դիսկուրսում,
- սահմանել խոսքարկման և տեղեկատվական գործառույթների հարաբերակցությունը,
- որոշարկել այն լեզվական միավորները, որոնք հանդես են գալիս որպես խոսքարկման և տեղեկատվական գործառույթների հարաբերակցության կրող,
- մեկնաբանել այդ լեզվական միավորների կոնկրետ գործառույթներն անգլերեն գիտական խոսքում դրանց հաղորդակցական, գործաբանական նշանակության և դիսկուրսի կազմավորման տեսանկյունից, և ընտրել դրանց ուսումնասիրության համապատասխան մեթոդաբանություն,

- պարզել ուսումնասիրված լեզվական միավորների գործածության հաճախականությունն անգլերեն գիտական դիսկուրսում՝ ըստ վերջինիս համապատասխան տարատեսակների և դրսևորումների, լուսաբանել այդ լեզվական միավորների գործառնություններն ինչպես երկրորդային, այնպես էլ գլխավոր դիսկուրսում:

Ատենախոսության **մեթոդաբանական հիմքը** ժամանակակից լեզվաբանության մեջ հաղորդակցության տեսությանը¹, դիսկուրսի կառուցվածքին² և համակարգային ֆունկցիոնալ լեզվաբանության մոտեցում համարվող բազմաեղանակային վերլուծությանը³ նվիրված աշխատություններն են, որոնց ընտրությունը պայմանավորված է աշխատանքում առաջադրված նպատակներով և խնդիրներով: Հետազոտության նպատակին հասնելու համար համադրվել են կորպուսային, ժանրային, բազմաեղանակային և երկխոսության վերլուծության **մեթոդներն** ու մոտեցումները, որոնք հնարավոր են դարձրել գիտական հաղորդակցության տարբեր ժանրերում խոսքարկման և տեղեկատվական գործառնությունների հարաբերակցության համակողմանի հետազոտությունը: Դրան է նպաստել նաև այդ հարաբերակցությունը հաստատող լեզվական միավորների՝ հարցական նախադասությունների, գործառնությունների վիճակագրական վերլուծությունը երկրորդային և գլխավոր դիսկուրսում:

Ուսումնասիրության օբյեկտն անգլերեն գիտական դիսկուրսն է իր ժանրային տարբեր դրսևորումներով, իսկ **ուսումնասիրության առարկան**՝ այն լեզվական միավորները, որոնցում, ինչպես ցույց է տալիս նյութի մեր քննությունը, լավագույնս դրսևորվում է գիտական դիսկուրսին բնորոշ տեղեկատվական և խոսքարկային գործառնությունների հարաբերակցությունը: Այդ լեզվական միավորներն են OK?, Alright? և Right?-ը, որոնք սահմանվում են որպես հարցական նախադասություններ, քանի որ այդ լեզվական միավորները դրսևորում են հարցական նախադասություններին բնորոշ հնչերանգային հատկանիշներ: Իսկ ինչ վերաբերում է հարա- և արտալեզվական հատկանիշներին, ապա հարալեզվական հատկանիշներից դիտարկվել են դադարը և դադարի բացակայությունը (Feist, 2016)⁴, իսկ որպես արտալեզվական հատկանիշ՝ դիմային արտահայտությունները, ժեստերը, գլխի շարժումները, հայացքը, մարմնի դիրքը

¹Jacobson R. Concluding statement: Linguistics and poetics // Sebeok T. (ed.) *Style in Language*. Cambridge: MIT Press, 1960, pp. 350-377.

² Montgomery M. M. *Some aspects of discourse structure and cohesion in selected science lectures*. Unpublished MA dissertation, Birmingham: University of Birmingham, 1977, pp. 1-189.

³Fortanet-Go mez I., Ruiz-Madrid N. M. Multimodality for comprehensive communication in the classroom: Questions in guest lectures // *Iberica*, vol. 28, 2014, pp. 203-224.

⁴Feist J. *Semantic structure in English*. Amsterdam: John Benjamins Publishing Company, 2016, pp. 1-427.

(McNeill, 1992)⁵ և ֆիզիկական գործողությունները, օրինակ՝ գրատախտակ մաքրելը, սահիկ փոխելը, դիդակտիկ նյութի ուղղությամբ քայլելը, ակնոցները բարձրացնելը և այլն:

Փաստական նյութը 70 դասախոսությունից և 26 գիտական հոդվածից քաղված հարցական նախադասությունների նմուշներն են, թվով 6685: Դասախոսությունները վերցված են OpenCourseWare ծրագրի շրջանակներում հասանելի յուրօրյան ալիքներից՝ ընդհանուր 67 ժամ տևողությամբ տեսաձայնագրություններ: Բոլոր դասախոսություններն ընտրվել են պատահականության սկզբունքով, և բոլորն էլ մատուցվում են տարբեր դասախոսների կողմից: Գիտական հոդվածները վերցված են անվճար հասանելի հեղինակավոր ամսագրերից՝ ևս պատահականության սկզբունքով: Հնդվածներն ունեն արևմտյան տպագրական ստանդարտներին բնորոշ կառուցվածք՝ յուրաքանչյուրը, միջինում, բաղկացած է 7-8 էջից:

Աշխատանքի **գիտական նորույթը** պայմանավորված է առաջադրված հետազոտական հիմնահարցով, այն է՝ արդյոք գիտական դիսկուրսում առկա է տեղեկատվական և խոսքարկման գործառույթների փոխկախվածություն: Աշխատանքում նորովի է սահմանվում խոսքարկման գործառույթը, հաստատվում է խոսքարկման և տեղեկատվական գործառույթների հարաբերակցությունը, առաջադրվում է հարցական նախադասությունների նոր դասակարգում և վերհանվում են հարցական նախադասությունների նոր գործառույթներ:

Աշխատանքի **տեսական արժեքը** խոսքարկման գործառույթի նոր սահմանումն է գիտական դիսկուրսում, ինչպես նաև տեղեկատվական ու խոսքարկման գործառույթների հարաբերակցության հաստատումը: Տվյալ վերջնարդյունքները եզակի են, քանի որ որևէ ուսումնասիրություն տվյալ թեմայով դեռևս չի արվել: Հետազոտության արդյունքում մշակված դրույթները, առաջադրված հարցադրումները հնարավորություն են ընձեռում նորովի գնահատելու խոսքաստեղծման ու խոսքընկալման ներքին մեխանիզմները, որոշարկելու խոսքարկման գործառույթի դերն անգլերեն գիտական դիսկուրսի կազմավորման գործում՝ դրանով իսկ նպաստելով խոսքի հաղորդակցական, գործառական տեսության հարստացմանն ու հետագա զարգացմանը:

Աշխատանքի **գործնական արժեքը** պայմանավորված է ուսումնասիրության արդյունքների ներդրման հնարավորությամբ և դրանց օգտակարությամբ ակադեմիական միջավայրում կիրառվող անգլերենի դասավանդման գործընթացում: Ստացված արդյունքները կարող են կիրառություն գտնել նաև անգլալեզու գիտական աշխատություններ գրելիս, գիտական թեմաներով անգլերեն լեզվով ելույթներ/դասախոսություններ պատրաստելիս և հայերենից

⁵McNeill D. *Hand and mind: What gestures reveal about thought*. Chicago: The University of Chicago Press, 1992, pp. xi-416.

անգլերեն գիտական թարգմանություններ կատարելիս: Այլ կերպ ասած, դրանք կնպաստեն նաև գիտական անգլերեն բանավոր և գրավոր խոսքի արդյունավետ կառուցման հմտությունների յուրացմանն ու զարգացմանը: Հարցական նախադասությունների նոր գործառույթների վերհանումը ևս արժեքավոր է կիրառելիության տեսանկյունից: Նոր գործառույթները, ինչպիսիք են ստեղծել ներգրավվածության տպավորություն, չինչել գերիշխող կամ հաստատել նախորդ մտքի ճշմարտացիությունը, վերաարժևորում են հարցական նախադասությունները՝ որպես բովանդակության ընկալումը խթանող մանկավարժական գործիք:

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է քննարկվող նյութի պահանջներով: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից համապատասխան ենթագլուխներով, ուսումնասիրության հիմնախնդիրները լուսաբանող և լրացնող ծանոթագրություններից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և երկու հավելվածից:

Առաջին գլուխը («Խոսքարկման և տեղեկատվական գործառույթների քննության տեսական հիմքերը գիտական դիսկուրսում») բաղկացած է **երեք ենթագլխից՝ «Խոսքարկման և տեղեկատվական գործառույթների ուսումնասիրման տեսական հիմքերը», «Դասախոսությունները և գիտական հոդվածները՝ որպես գիտական դիսկուրսի ժանրեր» և «Հարցական նախադասությունները և դրանց դասակարգումը դասախոսություններում և գիտական հոդվածներում»:** Այս գլխում ներկայացվում են հետազոտության տեսական հիմքերն ու մատնանշվում են առկա բացթողումները: Խոսքարկման գործառույթն առաջին անգամ սահմանվել է Մալինովսկու կողմից 1923թ.-ին որպես «իմաստագուրկ և գործառական» միջոց «լռությունից խուսափելու և քաղաքավարի երևալու համար» (Ogden & Richards, 1923: 316)⁶: Անցյալ դարից ի վեր խոսքարկման գործառույթի սահմանումը չի ենթարկվել փոփոխությունների, այլ վերադիտարկվել է հաղորդակցության համատեքստում, երբ սկսել են կարևորվել խոսողի ու լսողի դերը այդ գործառույթի իրացման պահին: Այնուամենայնիվ, բացառություն է Լավերի (Laver, 1975)⁷ մտտեցումը: Վերջինս խոսքարկման արտահայտությունների ընտրությունը համարել է իմաստալից, քանի որ այդ ընտրությունը բխում է խոսակիցների հասարակական դիրքից: Ինչ վերաբերում է տեղեկատվական գործառույթին, ապա այն համարվում է գիտական դիսկուրսի գլխավոր գործառույթը, որն իրացվում է տարբեր ենթագործառույթների շնորհիվ, որոնցից մեր աշխատանքում ընտրվել է

⁶ Malinowski B. K. The Problem of meaning in primitive languages // Ogden C. K., Richards I. A. (eds.). *The meaning of meaning. A study of the influence of language upon thought and of the science of symbolism*. New York: Harcourt, Brace & Company, 1923.

⁷ Laver J. Communicative functions of phatic communion // Kendon A., Harris R., Key M. (eds.). *The organisation of behaviour in face-to-face interaction*. The Hague: Mouton, 1975, pp. 215- 238.

նկարագրությունը (Deroey & Taverniers, 2011)⁸, քանի որ այն խիստ բնորոշ է բնագիտական դիսկուրսին: Բնչպես ցույց է տալիս այս հարցին առնչվող տեսական գրականության մեր քննությունը, գիտական դիսկուրսում այս գործառույթների հարաբերակցությանն առնչվող համապարփակ հետազոտություններ չկան: Մեզ հանդիպած երկու հետազոտություններից մեկը իրականացվել է գեղարվեստական գրականության նյութի հիման վրա (Шевченко, 2015)⁹, իսկ մյուսում հեղինակները (Brusenskaya & Kulikova, 2019)¹⁰ կենտրոնացել են գիտական հոդվածներին առաջադրվող կառուցվածքային պահանջների վրա և որակել դրանք ձևական ու ֆունկցիոնալ: Այս գլխում ուսումնասիրվել են նաև հարցական նախադասությունների քննության տեսական հիմքերը: Ստենախոսության մեջ ելակետային է Չենգի (Chang, 2012)¹¹, Կամիկոտոլիի (Camiciottoli, 2007)¹² և Կառոլ-Խուլիանի (Querol-Julían, 2008)¹³ առաջարկած հարցական նախադասությունների դասակարգումը գիտական խոսքում: Դրանք են բովանդակային հարցեր ու լսարանին ուղղված հարցեր: Մեր հետազոտության արդյունքում, առաջարկվել է հարցական նախադասությունների նոր դասակարգում, ինչի մասին կխոսենք ստորև:

Երկրորդ գլուխը «Մտաքարկման գործառույթը որպես դիսկուրսի կազմավորման գործոն», ևս բաղկացած է երեք ենթագլխից՝ «Հետազոտական աշխատանքի գործիքակազմը», «Հարցական նախադասությունների կիրառության հաճախականությունը և վիճակագրական նկարագրությունը երկրորդային դիսկուրսում» և «Հարցական նախադասությունների կիրառության հաճախականությունը և վիճակագրական նկարագրությունը գլխավոր դիսկուրսում»: Այս գլխում ներկայացվում են աշխատանքի կատարման գործիքակազմը, հետազոտության ընթացքը, հետազոտության առարկա հանդիսացող լեզվական միավորների, այն է՝ հարցական նախադասությունների, նոր դասակարգումն ըստ բազմաեղանակային մոտեցման, ինչպես նաև հարցական նախադասությունների նմուշավորված կիրառելիության նկարագրա-

⁸Deroey K. L. B., Taverniers M. A corpus-based study of lecture functions // *Moderna Språk*, vol. 105 (2), 2011, pp. 1–22.

⁹Шевченко И. С. Соотношение информативной и фатической функций как проблема эколлингвистики // *Когниция, коммуникация, дискурс*, том 10, 2015, pp. 114-132.

¹⁰Brusenskaya L. A., Kulikova E. G. Imitation, information value and phatic communication in the genres of academic discourse // *Russian Journal of Linguistics*, vol. 23 (1), 2019, pp. 131-148.

¹¹Chang Y. Y. The use of questions by professors in lectures given in English: Influences of disciplinary culture // *English for Specific Purposes*, vol. 31, 2012, pp. 103-116.

¹²Camiciottoli B. C. *The Language of business studies lectures: a corpus-assisted analysis*. Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 2007.

¹³Querol-Julían M. The role of questions in English academic lectures // *Newcastle Working Papers in Linguistics*, vol. 14, 2008, pp. 100-111.

կան վիճակագրությունը: Հետազոտության առարկան բնագիտական ոլորտի 70 անգլալեզու դասախոսությունից և 26 գիտական հոդվածից բաղված հարցական նախադասություններն են: Ժանրերի ընտրությունը պայմանավորված է խոսքարկման գործառնության նախկինում ուսումնասիրված ժանրերով, այն է՝ բանավոր զրույց-երկխոսություններ և մասնագիտական երկխոսություններ: Քանի որ դասախոսությունները պարունակում են ոչ ֆորմալ խոսքին բնորոշ հատկանիշներ, ընտրությունը կանգ առավ դասախոսությունների վրա՝ որպես «բանավոր ժանր» (Giménez, 2000)¹⁴: Բնական գիտություններն այն ոլորտն են, որտեղ նյութը դեռևս մատուցվում է ավանդական դասախոսությունների տեսքով, այն է՝ դասախոսը տեղեկության ակտիվ մատուցողն է, իսկ լսարանն՝ այն ընդունողը (Akiha et al., 2018)¹⁵: Ավելի համապարփակ պատկերացում կազմելու համար, թե ինչպիսին է խոսքարկման իրացումն գիտական դիսկուրսում, գիտական հոդվածները ևս ներառվեցին ուսումնասիրության մեջ: Նրանք թվով 26-ն են, որը պատճառ թիվ է վստահելի արդյունքների ձեռքբերման համար՝ ըստ քանակական հետազոտության սկզբունքների: Այսպիսով, նյութի համակողմանի և արդյունավետ քննության նպատակով կազմվել է 70 դասախոսությունից ու 26 գիտական հոդվածից բաղկացած ծավալուն կորպուս: Հաջորդիվ, անհրաժեշտ էր ուսումնասիրել տվյալ ժանրերի հատկանիշները, որպեսզի հնարավոր լիներ ընտրել այն լեզվական միավորը, որի շնորհիվ խոսքարկման գործառնությունը կուսումնասիրվեր գիտական դիսկուրսում: Արդյունքում ընտրվեցին խոսքարկային արտահայտություններ համարվող հարցական նախադասություններ OK?, Alright? և Right?-ը: Հասկանալու համար, թե արդյոք վերոնշյալ խոսքարկային արտահայտություն համարվող հարցերը տարբերվում են ոչ-խոսքարկային այլ հարց-արտահայտություններից՝ փաստական նյութի մեր կորպուսում ընդգրկվեցին նաև դասախոսություններում կիրառվող հատուկ հարցերը, և գիտական հոդվածներում տեղ գտած հատուկ, ընդհանուր, ինչպես նաև զեղչված անդամով հարցական նախադասությունները: Այսպիսով, ուսումնասիրվել է 6.663 հարցական նախադասություն դասախոսություններում, և 22-ը՝ գիտական հոդվածներում (տե՛ս Աղյուսակ 1):

Հաջորդ քայլը հարցական նախադասությունների գործառնությունների ուսումնասիրությունն է, որն ինքնին հանգեցրեց բազմաէականակային վերլուծու-

¹⁴Giménez R. *La repetición lingüística en el género de la clase magistral: el inglés académico oral en el ámbito de las ciencias sociales*. (PhD thesis). Valencia: Publicacions de la Universitat de Valencia, 2000.

¹⁵ Akiha K., Brigham E., Couch B. A., Lewin J., Stains M., Stetzer M. R., Smith M. K. What types of instructional shifts do students experience? Investigating active learning in science, technology, engineering, and math classes across key transition points from middle school to the university level // *Frontiers in Education*, vol. 2, 2018, pp. 1–18.

Աղյուսակ 1. Հարցական նախադասությունները դասախոսություններում և գիտական հոդվածներում


Հարցական նախադասություններ	հատուկ հարցեր	OK?	Right?	Alright?
Դասախոսություններում	2087	1627	2589	360
ընդամենը՝ 6.663				
Հարցական նախադասություններ	հատուկ հարցեր	ընդհանուր հարցեր	զեղչված անդամով հարցեր	-
Գիտական հոդվածներում	9	11	2	-
ընդամենը՝ 22				

յան ընտրությանը: Բանն այն է, որ առանց հարա- և արտալեզվական հատկանիշների, ինչպես նաև համատեքստային կիրառելիության դիտարկման, հարցերի գործառական վերլուծությունը դառնում է անկատար և թերի, ինչպես օրինակ այն հարցերի պարագայում, որոնք կիրառվում են առանց դադարի, բայց ակնկալում են պատասխան: Ուստի, հարցերն ուսումնասիրելիս կիրառվել է նաև երկխոսության վերլուծության մեթոդը, որն օգտագործվել է փոխազդեցության փուլում, այն է՝ դասախոսի կողմից առաջադրված հարց ու պատասխանի ընթացքում:

Շնորհիվ բազմաեղանակային վերլուծության հնարավոր եղավ առաջադրել հարցական նախադասությունների նոր դասակարգում, որն արտացոլում է հարցերի գործառական կիրառության ամենահաճախ կրկնվող հատկանիշները, և ամփոփում հարցական նախադասությունների իրական ու բնական կիրառումը սովյալ համատեքստում: Նոր դասակարգումն է՝ պատասխան չպահանջող առանց դադարի հարցեր (58,3%), պատասխան չպահանջող դադարով հարցեր (26,6%), պատասխան պահանջող դադարով հարցեր (10,4%) և պատասխան պահանջող առանց դադարի հարցեր (4,7%) (տե՛ս Պատկեր 1):

Երրորդ գլխի («Մտքարկումն ու տեղեկատվականությունը գիտական խոսքում») ենթագլուխներն են **«Մտքարկումն ու տեղեկատվականությունը գիտական խոսքի երկրորդային դիսկուրսի մակարդակում»**, **«Մտքարկումն ու տեղեկատվականությունը գիտական խոսքի գլխավոր դիսկուրսի մակարդակում»** և **«Մտքարկումն ու տեղեկության մատուցումը գիտական դիսկուրսում»**: Այս գլխում դիտարկվում են հարցերի կիրառության օրինակներ, որոնք ենթարկվում են բազմաեղանակային վերլուծության և որոնք հիմք են ծառայում վստահելի եզրահանգումների համար:

Պատկեր 1. Հարցական նախադասությունների նոր դասակարգում՝ ըստ բազմաներանակային վերլուծության



Անդրադառնալով հարցերի գործառական կիրառությանը երկրորդային դիսկուրսում՝ պատասխան չպահանջող առանց դադարի հարցերը կիրառվել են հետևյալ գործառություններով՝ կենտրոնացնել ուշադրություն մտքի կարևորության վրա, հաստատել նախորդող մտքի ճշմարտացիությունը, ստեղծել ներգրավվածության տպավորություն և չինչել գերիշխող:

Ուշագրավ է, որ մի կողմից խոսքարկային և, մյուս կողմից, ոչ-խոսքարկային հարցական նախադասությունների գործառությունները հիմնականում համընկնում են, և մեկ հարցական նախադասությունը կարող է արտահայտել բազմաթիվ գործառություններ, այսինքն՝ կարող է լինել բազմագործառությային: Դիտարկենք հետևյալ օրինակը.

*...And when you do that, you get a set of solutions for the valence electrons which is, as you might expect, it's periodic. It's periodic and it invokes wave-like properties of the electron and you end up with a set of values of the wavelengths for the electron that are such that it allows mobility, which is, after all, what we're after. These electrons got to move through the solid if we're going to have conductivity. **Alright?** And this is an example where*

*classical physics wouldn't allow that. **Alright?** So you can't get this kind of behavior with classical physics. So that's one piece. (Sadoway, 2010)¹⁶*

Այս համատեքստում դասախոսն օգտագործում է երկու **Alright?**: Այս հարցերի միջոցով նա լսարանի ուշադրությունը կենտրոնացնում է երկու կարևոր մտքի վրա, որոնք են՝ նման շարժման դեպքում առաջանալու է «հաղորդունակություն» և որ այդ երևույթը շեղվում է դասական ֆիզիկայի կանոններից: Այս, հարցական նախադասությունների օգնությամբ դասախոսը հաստատում է իր հաղորդած մտքերի ճշմարտացիությունը՝ հարցական նախադասությունների միջոցով վերացնելով դրանց իսկությանն առնչվող կասկածները: Տվյալ հարցական նախադասություններով նա նաև ստեղծում է ներգրավվածության տպավորություն, ինչը պայմանավորված է հարցական նախադասությունների հարցական ձևով, որն էլ իր հերթին ենթադրում է պատասխան և փոխազդեցություն: Այս հնարքի շնորհիվ ստեղծվում է ավելի մոտ ու ընկերական հարաբերություններ: Ինչպես նաև, հարցական նախադասություններով դասախոսը մեղմում է իր գերիշխող դերը լսարանում՝ որպես տեղեկույթի միակ և ակտիվ մատուցող: Հարցերի միջոցով ստեղծվում է տպավորություն, թե լսարանն ունի այն տեղեկույթի պատասխանը, որը դասախոսը փորձում է ստանալ հարցի միջոցով, ինչի շնորհիվ լսարանը դառնում է հաղորդակցության գործընթացի ակտիվ մասնակից:

Պատասխան պահանջող առանց դադարի հարցերի պարագայում, բոլոր հարցերը, լինեն դրանք խոսքարկային, թե ոչ, հանդես են եկել համընդհանուր գործառույթով, այն է՝ ստանալ պատասխան: Եվս մեկ անգամ անհրաժեշտ է նշել, որ տվյալ գործառույթը բացահայտվել է շնորհիվ բազմաեղանակային վերլուծության, տվյալ դեպքում արտալեզվական հատկանիշների հաշվառմամբ, ինչպես օրինակ՝ տեսողական կոնտակտ, մարմնի դիրքի փոփոխություն, հայացք դեպի կոնկրետ ուսանող և այլն: Օրինակ՝

*...If I change them all by large amounts, I have a completely different structure. So I'm going to make small perturbations. **And if I'm doing this with fixed backbone angles and just rotating the side chains, then what would a neighboring state be?** (2sec) **Any thoughts?** (2sec) **What would a neighboring state be?** **Anyone?** (2sec) **Change a few of the side chain angles. **Right?** So we don't want to globally change the structure. We want some continuity between the current***

¹⁶Sadoway D. Introduction to solid state chemistry. MIT, 2010 // URL: https://www.youtube.com/watch?v=Io_4ZckeQ1k accessed 25 July 2017.

state and the next state. So we're going to choose an adjacent state in that sense, so the state space... (Fraenkel, 2014)¹⁷

Դասախոսը քննարկում է ոսկորները և դրանց շարժումները: Նա փորձում է ներգրավել լսարանին ու ստանալ նրանցից պատասխան: Այդ նպատակով նախ կիրառվում է դադարով հարցական նախադասություններ, ապա առանց դադարի հարցը, որին էլ հաջորդում է պատասխանը: Այսինքն, հարցի նպատակը պատասխան ստանալն է, և յուրաքանչյուր ուսանող կարող է տրամադրել իր պատասխանը, եթե գիտի: Հարցը նաև ուղեկցվում է լսարանի հետ տեսողական շփմամբ և դեպի լսարան մարմնի դիրքով:

Պատասխան պահանջող դադարով հարցերը, որպես ավանդական հարցեր, եղել են ելակետային հարցերի գործառնությանն ուսումնասիրության և դասակարգման ժամանակ: Ակնառու է, որ նման գործառնություն իրականացվել է նաև խոսքարկային հարցական նախադասությունների միջոցով, որոնք, շատ հետազոտողներ չեն համարում ավանդական հարցեր (Camiciottoli, 2008)¹⁸: Ստորև բերված օրինակում հարցական նախադասությունից հետո կա դադար, տեսողական կոնտակտ լսարանի հետ.

... What's really going on? So let's start by thinking about what would happen if I considered an s depicted by this red x . I probably shouldn't have used x . I should have probably used a star. That's not a pole. That's the value of s in this integral.

What happens if I choose to integrate against the function e to the minus st where s is 0 ? (2sec) If I choose to integrate against that function, that function as depicted by red here. So the convergence of the integral, the convergence of the thing that I'm calling a Laplace transform depends entirely on the convergence of x . That's what s equals 0 means... (Freeman, 2011)¹⁹

Այս հարցական նախադասության դեպքում դասախոսն օգտագործում է l' դադար, l' տեսողական շփում, և l' մարմնով շրջված է դեպի լսարանը, որոնք անհերքելի են դարձնում հարցական նախադասության գործառնություն այս խոսքային իրադրությունում, այն է՝ հարց, որն ուղղված է պատասխան ստանալու համար:

¹⁷Fraenkel E. Predicting protein structure, MIT, 2014 // URL: https://www.youtube.com/watch?v=j1s9JfZKFqU&utm_source=youtube.com&utm_medium=short_domains&utm_campaign=www.ssyoutube.com accessed 23 October 2017.

¹⁸Camiciottoli B. C. Interaction in academic lectures vs. written text materials: The case of questions // *Journal of Pragmatics*, 40, 2008, pp. 1216-1231.

¹⁹Freeman D. Laplace transform. MIT, 2011 // URL: <https://www.youtube.com/watch?v=MRy8xxvsZA4&list=PLU14u3cNGP61kdPAOC7CzFjZ8flE MUxs&index=6> accessed 30 October 2017.

Պատասխան չպահանջող դադարով հարցերի պարագայում, հանդիպել ենք հետաքրքիր իրողության, երբ հարցը և հարա- ու արտալեզվական հատկանիշները գործել են իրարից անկախ: Դադարն արվել է ինչ-որ գործողություն կատարելու համար, ինչպես օրինակ, գրատախտակ մաքրելը, սահիկը փոխելը, արկղից ոսկորը հանելը և այլն, իսկ հարցական նախադասությունն օգտագործվել է պատասխան չպահանջող առանց դադարի հարցերի նման, այն է՝ հաստատել նախորդող մտքի իսկությունը, չինչել գերիշխող, ստեղծել ներգրավվածության տպավորություն ու կենտրոնացնել ուշադրությունը նախորդող մտքի կարևորության վրա: Եվ կրկին, և խոսքարկային, և՛ ոչ-խոսքարկային հարցական նախադասությունների գործառնությունները համընկնում են: Ահա մի օրինակ ևս.

. . . Alright? But I think by far it's true, I'm not making that up. But this is the most common notation. Alright? And that is the notation that I will use.

OK. Now, now, now, now we are ready at last to at least ask the question that's really at the heart of all of this, "How general can this be?" (4sec) "How general can this be?" (3sec) I mean I'm in the form now algebraically. . . . Well, I'm in the form now where. . . I can ask the question, and as we'll see algebraically writing sums of this form is by far the easiest way to approach it. (Osgood, 2008)²⁰

Տվյալ օրինակում հարցական նախադասությունն օգտագործվում է ինչպես առանց դադարի պատասխան չպահանջող հարցական նախադասությունները, այն է՝ կենտրոնացնել ուշադրություն, չինչել գերիշխող, ստեղծել ներգրավվածության տպավորություն ու հաստատել նախորդող միտքը: Իսկ դադարն արվում է գրատախտակը մաքրելու համար: Փաստացի, հարցական նախադասությունն ու նրան ուղեկցող արտա- և հարալեզվական հատկանիշները գործածվել են իրարից անջատ:

Հարցական նախադասությունները գիտական հոդվածներում ևս բազմագործառնությամբ են: Հարցական նախադասությունները հիմնականում կենտրոնացնում են լսարանի ուշադրությունը մտքի կարևորության վրա, ստեղծում ներգրավվածության տպավորություն և մասնավորեցնում հարցադրման նպատակը: Ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունը, այս ժանրում խոսքարկային հարցեր չեն կիրառվել: Օրինակ՝

3. Distribution of algebraic numbers

*We would like to study the joint distribution of several conjugate algebraic numbers of degree n and bounded height. **What is the natural configuration space***

²⁰Osgood B. The Fourier transforms and its application. Stanford University, 2008 // URL: <https://www.youtube.com/watch?v=1rqJl7Rs6ps&feature=share> accessed 09 July 2017.

for this problem? Consider a prime polynomial of degree n . Some of its zeros are real, and the rest are symmetric with respect to the real line. Thus we may neglect the zeros lying in C^- . Fix some integer numbers $k, l \geq 0$ such that $0 < k + 2l \leq n$. (Götze et al., 2020)²¹

Այս օրինակում հարցական նախադասությունն օգտագործվում է «Results» բաժնում և բազմագործառնությամբ է: Գործառնություններից մեկն է կենտրոնացնել լսարանի ուշադրությունը «խնդրի բնական կոնֆիգուրացիոն տարածքի» վրա: Բնարկե, ուշադրությունը կենտրոնացվում է հարցական նախադասության հարցական ձևի շնորհիվ, քանի որ ցանկացած հարցական ձևով ասույթ ընկալվում է որպես պատասխան պահանջող լեզվական դրսևորում: Այս երևույթի նյարդաբանական մանրակրկիտ բնութագիրը ներկայացված է նյարդաբան Դեյվիդ Հոֆֆելդի (Hoffeld, 2016)²² կողմից: Մեկ այլ գործառնույթ է ավելի ըմբռնելի դարձնել ուսումնասիրվող նյութի առարկան, որը, տվյալ դեպքում, «կոնֆիգուրացիայի տարածքն» է: Հաջորդ գործառնույթն է ստեղծել ներգրավվածության տպավորություն՝ շնորհիվ հարցական ձևի: Հաշվի առնելով հաղորդակցական մոտեցման արդյունավետությունը բովանդակության ըմբռնման համար նման տպավորության խթանումը անհրաժեշտություն է:

Ինչ վերաբերում է գլխավոր դիսկուրսիս, ապա հարցական նախադասություններն այստեղ հանդես են գալիս մի շարք քայլերում: Առաջին հերթին դրանք կիրառվում են որպես հռետորական հարցեր, որի բնութագիրը որպես դիսկուրսի քայլ, առաջադրվել է Մոնթգոմերիի (Montgomery, 1977)²³ կողմից: Հատկանշական է, որ միայն հատուկ հարցերն են կիրառվել որպես հռետորական հարց: Այս դեպքում դրանց գործառնույթն է սկսել էպիզոդը հարցով ուշադրություն գրավելու նպատակով:

Հարցական նախադասությունների հաջորդ գործառնույթը էպիզոդն ավարտելն է: Այս դեպքում կիրառվում են ոչ միայն ոչ-խոսքարկային, այլև ֆիքսված-խոսքարկային հարցեր, ինչպիսիք են Right?, Alright? և OK?-ը: Նրանց գործառնույթն է, ինչպես նշվեց, ազդարարել էպիզոդի ավարտը: Դիտարկենք հետևյալ օրինակը՝

Now talking about protein structure, there's one other thing I want to consider.

²¹Götze F., Koleda D., Zaporozhets D. Joint distribution of conjugate algebraic numbers: A random polynomial approach. *Advances in Mathematics*, vol. 359, 2020 // DOI: <https://doi.org/10.1016/j.aim.2019.106841209>

²²Hoffeld D. *The Science of selling: Proven strategies to make your pitch, influence decisions, and close the deal*. Tarcher Perigee: Penguin Publishing Group, 2016, pp. 1-287.

²³Montgomery M. M. Some aspects of discourse structure and cohesion in selected science lectures. Unpublished MA dissertation, Birmingham: University of Birmingham, 1977, pp. 1-189.

Alright? I'll give you some other examples in a minute that we will call fibrous proteins, fibrous in the sense that they are literally fibers. OK? They form a helical structure, and that helical structure just goes on and on and on, on and on, on. OK? It doesn't stop. It just keeps going on and on. Your hair is a fibrous protein. OK? It goes on and on and on. In my case it doesn't go on as much as it goes on you, guys, but it keeps going on and on and on and on. Right? OK?

Fibrous proteins have primary structure and the Gila seeds that they...
(Ahern, 2013)²⁴

Alright?-ը ազդարարում է էպիզոդի սկիզբը և մասնանշում, որ այն լինելու է «սպիտակուցների կառուցվածքի» մասին: Այս պարագայում, այն ծառայում է որպես «հռետրական հարց»: Հաջորդ երկու հարցերը կիրառվում են էպիզոդի ավարտն ազդարարելիս: Նախքան «մանրաթելային սպիտակուցների» ներկայացումը դասախոսը ընդգծում է «սպիտակուցների ընդհանուր կառուցվածքի» էպիզոդի ավարտը՝ կիրառելով Right? և OK? միաժամանակ ու առանց որևէ դադարի:

Փաստական նյութի մեր քննությունն ի հայտ է բերել նաև հարցական նախադասություններ, որոնց գործառնությունը գլխավոր դիսկուրսում էպիզոդը զարգացնելն է: Այս քայլում կիրառվել են հարցական նախադասությունների բոլոր տեսակները: Օրինակ՝

The second kind of limit - well so this isn't the only second kind of limit but I just want to point this out, it's very important - is that: derivatives are, are always harder than this. You can't get away with nothing here. So, why is that? Well, when you take a derivative, you're taking the limit as x goes to x_0 of $f(x)$, well we'll write it all out in all its glory. Here's the formula for the derivative. Now notice that if you plug in $x = x_0$, always gives $0 / 0...$ (Jerison, 2007)²⁵

Այս օրինակում հատուկ հարցն օգտագործվում է էպիզոդի զարգացման փուլում՝ կապելով էպիզոդի սկիզբն իր ավարտի հետ գլխավոր դիսկուրսում: Դասախոսն սկզբում ներկայացնում է, որ ածանցյալն ունի «երկրորդ սահմանափակում»: Հաջորդիվ, նա հարցական նախադասության միջոցով ազդարարում է, որ նկարագրելու է այդ սահմանափակումը: Էպիզոդն ավարտվում է այդ սահմանափակման նակարագրությամբ:

²⁴Ahern K. Protein structure. Kevin Ahern, 2013 // URL: <https://www.youtube.com/watch?v=m7QEn8HSD3I> accessed 23 October 2017.

²⁵Jerison D. Single variable calculus. MIT, 2007 // URL: <http://youtube.com/watch?v=ryLdyDrBfVI> accessed 25 July 2017.

Ինչ վերաբերում է գիտական հոդվածներին, ապա այստեղ ոչ-խոսքարկային հարցական նախադասությունները կիրառվել են վերնագրերում ուսումնասիրվող նյութը դուրսընթացի դարձնելու նպատակով, ինչպես նաև էպիգոդների սկզբում և վերջում: Խոսքարկային հարցական նախադասություններ գիտական հոդվածներում չենք հանդիպել: Օրինակ՝

...Therefore, a different innovation environment started to form, which Chesbrough later called “open innovation”.

*This triggered a series of debates among researchers, and the most discussed question is: **is it always good for enterprises to use external sources to innovate and to what degree can firms rely on external sources** (Chesbrough, 2006)? Studies have discussed the pros and cons of open innovation (Almirall & Casadesus-Masanell, 2010). Chesbrough’s study discovered that external forces can enhance the efficiency of projects, and shorten working time, which can make a difference for short-term projects in particular... (Zhang et al., 2018)²⁶*

Այս օրինակում հարցական նախադասությունը կիրառված է «Introduction» բաժնում և ազդարարում է էպիգոդի սկիզբը՝ դրանով իսկ իրականացնելով էպիգոդին տվյալ քայլում կառուցվածքայնություն հաղորդելու գործառույթ:

Այսպիսով, ուսումնասիրելով հարցական նախադասությունների գործառական առանձնահատկությունները դիսկուրսի գլխավոր և երկրորդային մակարդակներում և վերլուծելով դրանք խնդրո առարկա հանդիսացող խոսքարկման և տեղեկատվական գործառույթների հարաբերակցության տեսանկյունից, հանգել ենք հետևյալ **եզրակացություններին**.

- Խոսքարկման գործառույթն ապահովում է գիտական դիսկուրսի շարունակականությունը երկրորդային և կառուցվածքայնությունը՝ գլխավոր դիսկուրսում: Երկրորդային դիսկուրսում այդ շարունակականության ապահովման ընթացքում վերացվում են բովանդակության մատուցման հնարավոր արգելքները՝ նպաստելով վերջինիս մատուցման ամբողջականությանը, իսկ գլխավոր դիսկուրսում, երաշխավորելով կառուցվածքայնությունը, խոսքարկային ասույթները բովանդակության ընկալումը դարձնում են դուրսընթացի:

- Խոսքարկման գործառույթն իրացվում է ոչ միայն խոսքարկային արտահայտությունների միջոցով, այլ նաև ոչ-խոսքարկային արտահայտություններով, որոնք, ինչպես խոսքարկային արտահայտությունները, ևս օժտված են

²⁶Zhang S., Yang D., Qiu S., Bao X. & Li J. Open innovation and firm performance: Evidence from the Chinese mechanical manufacturing industry // *Journal of Engineering and Technology Management* vol. 48, 2018, pp. 76-86 // DOI: <https://doi.org/10.1016/j.jengtecman.2018>.

դիսկուրսին շարունակականություն ու կառուցվածքայնություն ապահովելու գործառնությունը:

- Փաստացիորեն, խոսքարկման և տեղեկատվական գործառնությունը հարաբերակցվում են, որի ընթացքում խոսքարկման գործառնությունը տեղեկատվական գործառնություն հաղորդում է շարունակականություն երկրորդային դիսկուրսում և կառուցվածքայնություն՝ գլխավոր դիսկուրսում, իսկ տեղեկատվական գործառնություն ընդունում է իր արտահայտման ձևի փոփոխությունները, որպեսզի ապահովի դիսկուրսի հաղորդակցական նպատակի իրացումը և բովանդակության ճիշտ ըմբռնումը:

- Գործառնությունների հարաբերակցության հաստատումը ևս մեկ անգամ շեշտում է ժանրահեն ուսուցման կարևորությունը գիտական դիսկուրսի պարագայում, երբ դիսկուրսի մասնակից ուսանողները ձեռք են բերում գիտելիք ոչ միայն դասավանդվող առարկայի մասին, այլև այն ժանրի մասին, որի միջոցով բովանդակությունը հաղորդվում է: Շնորհիվ նման գիտելիքի խթանվում է ոչ միայն բովանդակության ընկալումը, այլև դրա ստեղծումը՝ որպես այդ ժանրի ապագա ստեղծող կամ ժանրն սպառող:

- Հարցական նախադասություններն, իբրև խոսքարկման արտահայտություններ, բազմագործառնությամբ են: Այս գործառնություններից ոչ մեկը չի ստորադասվում, կամ գերադասվում մյուսից, այլ դրանք իրացվում են հավասարաչափ: Այս բազմագործառնությունները բխում է հարցական նախադասությունների հարցական ձևից: Վերջինս հնարավորություն է տալիս գրավել ուշադրություն, դրանով իսկ ստեղծելով տպավորություն, թե հարցն ունի ներգրավվածություն ապահովելու նպատակ: Ավելին, հարցական ձևը մեղմացնում է խոսողի բացարձակ գերակայությունը՝ լսողին ևս տեղեկությունի աղբյուր դիտարկելու առումով:

- Բազմաեղանակային մոտեցումը առանցքային է հարցական նախադասությունների գործառնությամբ վերլուծության հարցում: Այն հնարավորություն է ընձեռում բացահայտել նոր գործառնություն և խուսափել հնարավոր սխալ մեկնաբանություններից:

- Հարցական նախադասություններն իրականացնում են մի շարք գործառնություններ, որոնք բացահայտվում են շնորհիվ բազմաեղանակային մոտեցման, ինչն էլ վերաարժևորում է նրանց դերը՝ որպես մանկավարժական գործիք:

- Հարցական նախադասություններն ու նրանց ուղեկցող հարա- և արտա-լեզվական հատկանիշները կարող են ինչպես լրացնել միմյանց, այնպես էլ գործել իրարից անկախ:

- Ձեռք բերված արդյունքները և խոսքարկման գործառնությունի նոր սահմանումը հնարավորություն է ընձեռում հանդես գալ գիտական դիսկուրսում հանդիպող վերոնշյալ ժանրերի լավագույնս ըմբռնվող նախատիպերի առաջադրմամբ բնագիտական ոլորտում, ինչն արժեքավոր է տվյալ բնագավառում

դասավանդող անգլախոս և ոչ անգլախոս, բայց անգլերենով դասավանդող դասախոսների համար:

Աշխատանքի Հավելված Բաժնում տեղ են գտել ուսումնասիրված նյութի մասին կարևոր տվյալներ, ինչպիսիք են՝ դասախոսի/հեղինակի ինքնությունը, դասախոսության թեման, համալսարանը, որտեղ մատուցվել է նյութը, դասախոսության տևողությունը, գիտական ամսագիրը և նյութի էլեկտրոնային հղումները:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Functional interpretation of Alright? as a lecture question: a multimodal analysis // *Armenian Folia Anglistika*, Vol. 14, No. 1 (18), Yerevan, 2018, pp. 40-50.
2. Phatic function in academic discourse // *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում* 2 (25), Երևան, 2018, էջ 3-12: (co-author - A. Chubaryan):
3. The functional interpretation of OK? in academic discourse // *Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում* 9, Երևան, 2018, էջ 111-122:
4. Functional and pragmatic characteristics of Right? in academic discourse. *ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական Հոդվածների ժողովածու* 1.2 (28), Երևան, 2019, էջ 257-264:
5. The interrelation of the phatic and informative functions in academic discourse // *Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար* 7 (16), Երևան, 2019, էջ 117-130:
6. Pragmatic interpretation of special questions in academic discourse // *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում* 1 (26), Երևան, 2019, էջ 3-15: (co-author - A. Chubaryan):

Nare Hakobyan

The Correlation between the Informative and Phatic Functions in English Academic Discourse

Summary

The **aim** of the research is to investigate the correlation between the phatic and informative functions and to identify the nature of that correlation. To arrive at the research goals in English academic discourse the following **objectives** are put forward:

- to observe how the phatic function is expressed and manifested in academic discourse, more particularly, in lectures and research articles in Natural Sciences;
- to reveal the correlation between the informative and phatic functions in academic discourse and define the nature of that correlation;
- to identify the most appropriate language units that will make the study of that correlation possible;
- to choose the most suitable approach/-es for the functional analysis of those language units in order to get comprehensive, reliable and valid results;
- to conduct the analysis of those language units at the subsidiary discourse level to perceive how the phatic function is fulfilled in the immediate context of speech production and information delivery;
- to carry out the analysis of those language units at the main discourse level to perceive how the phatic function is fulfilled in the overall speech production and information delivery as an outcome of the communication.

The **significance** of the current research is gaining academic data about how the two functions are implemented in academic discourse. The findings are a valuable contribution to the missing academic knowledge in the field. The research findings will be of utmost importance for EAP students and lecturers in EMI contexts as well.

The novelty of the research is that the present study, for the first time, addresses the question of correlation between the phatic and informative functions in academic discourse. Secondly, the phatic function is viewed from a completely new angle in academic discourse. Thanks to it, the phatic function gains new features, thus acquiring a refreshed and broader definition which may be studied in other genres as well. Thirdly, new pedagogical functions and taxonomy are ascribed to questions in academic discourse which amplify their value as a teaching tool not only for English native but also non-native instructors who deliver lectures in English internationally and locally.

The **methodological framework** is based on the purpose and objectives put forward in the research. The **methods** applied in the study are research synthesis, corpus analysis, genre analysis, multimodal analysis, conversation and statistical analysis. The **material** under investigation is a corpus of 6.663 questions in 70 lectures and 22 questions in 26

research articles in Natural Sciences. The corpus is accumulated with the open sources freely accessible on the Internet. The language units analyzed are fixed questions Right? Alright? and OK? that are defined as phatic phrases, and special, general and elliptical questions which are called non-fixed and non-phatic phrases. The choice of the latter is determined by the comparison of the functional realization between phatic and non-phatic phrases.

The **theoretical value** is the new definition of the phatic function gained in academic discourse, as well as the revelation of its correlation to the informative function. From that perspective, the research is truly exceptional and can become a source of reference for further studies in the field. The new interpretation of the phatic function emphasizes its significant role both in speech production and speech perception.

The findings of the work have significantly **practical value** and can be implemented in theoretical and practical courses of Text Linguistics, Functional Linguistics and Discourse Analysis. Besides, they may be useful in teaching English for academic purposes, writing scientific articles and other research papers in English, performing translation of scientific texts, etc. The results obtained contribute to the development and enhancement of efficiency skills in written and oral English for scientific communication. Moreover, questions are reviewed as a teaching tool in EAP. Due to the discovered functions they increase their value as an instructional instrument that has the potential of not only managing the auditorium but creating closer social bonds among discourse participants.

Нарэ Кайцеровна Акоюн

**Соотношение информативной и фатической функций
в английском академическом дискурсе
Резюме**

Реферируемая диссертация посвящена исследованию соотношения между фатической и информативной функциями в английском академическом дискурсе. **Цель** диссертации состоит в выявлении характера корреляции между фатической и информативной функциями. Для достижения поставленной цели в работе ставятся и решаются следующие **задачи**:

- изучение особенностей и проявления фатической функции в академическом дискурсе, в частности, в лекциях и научных статьях по естественным наукам;
- выявление соотношения информативной и фатической функций в английском академическом дискурсе и определение характера этого соотношения;
- определение языковых единиц, в которых наиболее ярко представлено это соотношение;
- выявление соответствующих подходов для функционального анализа данных языковых единиц для получения достоверных результатов;
- рассмотрение актуализации этих языковых единиц на уровне вспомогательного дискурса, в непосредственном контексте речепроизводства и передачи информации;
- исследование функциональных реализаций этих единиц для выявления роли и значимости фатической функции на уровне основного дискурса в процессе речепроизводства и речевосприятия.

Актуальность работы определяется ее перспективностью в решении целого комплекса теоретических и практических задач. Недостаточная степень изученности теории фатичности и роли ее соотношения с информативной функцией в английском академическом дискурсе обуславливает значимость исследования этого соотношения.

Новизна исследования определяется тем, что в ней впервые ставится вопрос о соотношении фатической и информативной функций в академическом дискурсе, где фатическая функция рассматривается под совершенно новым углом. Благодаря этому фатическая функция приобретает более широкое определение. Кроме того, новое осмысление функционирования и классификации вопросительных высказываний в научном дискурсе повышает их ценность в качестве педагогического инструмента.

Методологическая база исследования обусловлена поставленными целями и задачами. Для их достижения были использованы методы корпусного анализа, жанрового анализа, мультимодального анализа, конверсионального и

статистического анализа. Исследуемым материалом является корпус, состоящий из 6663 вопросительных высказываний в 70 лекциях и из 22 вопросов в 26 научных статьях по естественным наукам. Анализируемые языковые единицы включают фиксированные вопросы Right? Alright? and OK?, которые определяются как фатические высказывания, и специальные, общие и эллиптические вопросы, т.е. нефиксированные или нефатические высказывания. Выбор обусловлен целью сравнения функциональной реализации фатических и нефатических высказываний в данных жанрах научного дискурса.

Теоретическая значимость работы состоит в том, что положения, разработанные в результате исследования, позволяют по-новому оценить различные механизмы речепроизводства и речевосприятия, определить дискурсообразующий потенциал фатической функции в английской научной речи, таким образом способствуя обогащению и дальнейшему развитию функционально-коммуникативной теории дискурса.

Практическая значимость работы заключается в том, что результаты исследования могут быть внедрены в курсах лингвистики текста, функциональной лингвистики, дискурс анализа. Кроме того, они могут быть использованы в практическом курсе английского языка для академических целей, при написании научных работ, а также при переводе текстов научной направленности. Результаты исследования могут способствовать развитию навыков эффективного построения письменной и устной научной речи на английском языке.

